ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ս. թ. նոյեմբերի 7-ին Ս. Էջմիածնի Մայր տաճարում Հոկտեմբերյան ռևոլուցիայի 27-րդ տարեդարձի օրը, ս. պատարագ մատուցվեց, որից հետո կատարվեց Հանրապետական մաղթանք։ Պատարագում էր տ. Եզնիկ վարդ. Ազնավուրյանը։

Քարոզ խոսեց գերաշնորհ տ. Կարապետ եպիսկ. Թումանյանը, որը բացատրեց Հոկտեմբերյան ռևոլուցիայի ազատարար դերը և ռևոլուցիայի հետ կապեց նաև մեր ժողովրդի վերածնունդն ու ազատագրումը Նոյեմբերյան ռևոլուցիայի միջոցով։

***

Ս. թ. նոյեմբերի 7-ին Երևանի Ս. Սարդիս եկեղեցում ս. պատարագ մատուցվեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի 27-րդ տարեդարձի առթիվ։ Պատարագից հետո կատարվեց Հանրապետական մաղթանք։

Պատարագիչ գերաշնորհ տ. Ռուբեն եպիսկ. Դրամբյանը քարոզ խոսեց և բացատրեց Հոկտեմբերյան ռևոլուցիայի ազատարար նշանակությունը բոլոր ճնշված ժողովուրդների համար։

Առանձնապես կանգ առնելով հայ ժողովրդի ազատագրման և հայ պետականության ստեղծման ու կազմակերպման խնդիրների վրա, նշեց այն մեծ օժանդակությունը, որ ռուս մեծ ժողովուրդը մատուցեց հայ ժողովրդին, փրկելով նրան վերջնական բնաջնջումից։

***

Սույն թվի նոյեմբերի 1-ին տեղի ունեցավ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի բացումը։

Գերաշնորհ տ. Ներսես եպիսկոպոս Աբրահամյանի գլխավորությամբ կատարվեց բացման հանդեսը։

Ողջույնի խոսքով հանդես եկան գերաշնորհ տ. Ռուբեն եպիսկոպոս Դրամբյանը և ճեմարանի տեսուչ պ. Մինաս Մինասյանը։ Բացման հանդեսին ներկա էին Ս. Էջմիածնի բոլոր միաբանները, Հոգևոր ճեմարանի սաները, ուսուցչական և տեխնիկական անձնակազմը։

Նոյեմբերի 2-ից սկսվեցին կանոնավոր պարապմունքները։

***

Սույն թվի նոյեմբերի 10-ին Արմավիրից Ս. Էջմիածին ժամանեց գերաշնորհ տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյանը վերադարձելու Հյուսիսային Կովկասի եկեղեցական գործերի մասին։ Տ. Սուրեն եպիսկոպոսը իր թեմում բաց է արել 3 նոր եկեղեցի։

***

Սույն թվի նոյեմբերի 15-ին գերաշնորհ տ. Կարապետ եպիսկոպոս Թումանյանը մեկնեց Ռոստով-Նախիջևան որպես թեմական առաջնորդ։

ՀԵՌԱԳՐՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

Մենք, Դամասկոսի հայերս, թվով մի քանի հազար մարդ, այսօր, կիրակի, օգոստոսի 19-ին հավաքվելով առաջնորդարան, լսեցինք Հայաստանից վերադարձած եկեղեցական ժողովի պատգամավորներ պ. պ. Եփրեմ Ելեզյանի, Գևորգ Բաբայանի և դ-ր պ. Կարագյոզյանի հաղորդագրությունները Էջմիածնի ժողովի և Սով. Հայաստանի հաջողությունների մասին։ Կարծում ենք, որ արտահայտում ենք Սիրիայի հարյուր հազարավոր հայերի միահամուռ ցանկությունը, խանդավառությամբ ողջունելով Ձերդ Վեհափառության ընտրությունն Էջմիածնի գահին։